ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ

«ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանից լույս տեսավ «Վազգեն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց. Ժամանակագրություն (1908-1988)» խորագրիրը կրող մի աշխատություն, որը հեղինակել է **Սուրեն Շ. Վանեցին**, ում հետ այս աշխատությանն առնչվող մի քանի հարցեր պարզաբանելու նպատակով, «Գրական թերթի» խմբագրությունը հարցազրույց անցկացրեց։

ՀԱՐՑ. – Պարոն Սուրեն, արդեն վաճառքի է հանվել «Ժամանակագրություն (1908-1988)» աշխատությունը, որտեղ փաստերի ու թվերի լեզվով շարադրված է մեր Վեհափառի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Տ.Տ. Վազգեն Ա.-ի արգասավոր կյանքի վերոհիշյալ ժամանակահատվածը։ Մեր ընթերցողներին կհետաքրքրեին այդ աշխատության ստեղծման հանգամանքները

ՊԱՏԱՍԽԱՆ. – Ինչպես գիտեք, 1990 թ. սեպտեմբերի 30-ին լրացավ մեր անզուգական Վեհափառի գահակալության երեսունհինգամյակը։ Հանրահայտ է, որ 1955 թ. սեպտեմբերի 30-ին Էջմիածնում իր աշխատանքները շարունակող Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստում, քվեից բացարձակ առավելությամբ (125 կողմ) ռումինահայ և բուլղարահայ թեմերի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Վեհափառի գահակալության հոբելյանը նախատեսվում էր նշել մեծ շուքով ու հանդիսավորությամբ, համազգային տոնի ձև ու արժեք տալով նրան։ Ծրագրված էին նաև մեռոնօրհնեքի հանդիսությունը, համազգային ուխտագնացություն դեպի Սևանա լիճ և շուրջ 9000 երեխաների մկրտություն ու հոգևոր մեծաշուք արարողություններ այնտեղ։ Մայր Հայրենիքից և Սփյուռքից միայն պաշտոնապես հրավիրվածների թիվն անցնում էր հազարից։ Այս հանդիսության համար է, ահա, որ իբրև «գրական» լրացում, նպատակահարմար դիտվեց հրատարակել Նորին Ս. Օծության կյանքի և գործունեության առձեռն մի տարեգրություն, որը տոնակատարության օրերին պետք է նվիրվեր իր հյուրերին։ Այն պետք է լիներ երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, ինչպես նաև լուսանկարազարդումներով։

Բայց ծայր առած համազգային-արցախյան շարժումը, մեր ժողովրդի գլխին եկած մեծ ու փոքր աղետների համախումբը և, մանավանդ, մեր հանրապետության մեծերի՝ Մոսկվայում հայտարարած սննդադուլը, որի մեջ, ինչպես հայտնի է, ամենևին էլ փոքր դեր չուներ հենց ինքը՝ Վեհափառ Հայրապետը, այլ ուղղություն թելադրեցին նախորոշված հանդիսությանը: Միանգամայն իրավացիորեն Մայր Աթոռում եկան այն եզրակացության, որ ամբողջ հանրապետության համար ջղաձիգ և համազգային դրամատիզմով լի այդ ժամանակներում զբաղվել տոնախմբություն կատարելով կամ հյուրեր ընդունելով, ոչ միայն լուրջ չէ, այլև անպատշաճ է ու անպատեհ: Եվ խստիվ սահմանափակվեց Հայրապետական գահակալության տարելիցի առթիվ նախանշված միջոցառումների ցանկը...

Այդ ամենից անմասն չմնաց նաև իմ կազմելիք «Ժամանակագրությունը»: Վեհափառ Հայրապետի կամքով այնտեղից հանվեցին նախ ռուսերեն, ապա՝ անգլերեն թարգմանությունները, գիրքը «բեռնաթափվեց» բոլոր նկարներից, և պահպանվեց միայն սկզբի ներդիրը, մնացած միակ հայերեն բնագիրը կրճատվեց զգալապես, և «օրակարգից» մեկընդմիշտ հանվեց գիրքը Ֆինլանդիայում հրատարակելու հարցը: Այսպիսի «հեշտ» ճանապարհ անցնելուց հետո է, ահա, որ հայազգի ընթերցողներին է ներկայանում Վազգեն Ա. Կաթողիկոսի «Ժամանակագրությունը»:

Ավելացնեմ, որ գրքի խմբագիրը եղել է ինքը՝ Վեհափառ Հայրապետը: Նա եղել է նաև իմ երկրորդ աշխատության՝ «Վազգեն Ա. Հայրապետ Հայոց. Համառոտ տարեգրություն» առաջին գրքի խմբագիրը (հրատարակված 1986 թ., Էջմիածնում), սակայն երկու դեպքում էլ Նորին Ս. Օծությունը վճռականորեն դեմ եղավ գրքերի վրա որպես խմբագիր իր անունը հիշատակելուն:

ՀԱՐՑ. – Վազգեն Ա. Կաթողիկոսի ծավալած գործունեությունը, որպես հայ եկեղեցու ականավոր հոգևոր առաջնորդի, որպես մեր ազգային եկեղեցին որակական մի նոր աստիճանի բարձրացնողի, հանրածանոթ է ու հանրահայտ: Բայց Վազգեն Կաթողիկոսը՝ խմբագիր, նորություն է շատերիս համար: Եթե կարելի է, մի քանի խոսք այդ կապակցությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Վեհափառը ժամանակների չարաղետ բերումով, հայկական կրթություն է ստացել հազիվ մեկ տարի, այն էլ ամենավաղնջական՝ 1920-ական թվականներին։ Սակայն երբ սկսեցինք «Համառոտ տարեգրության» խմբագրման աշխատանքները, ներքին ուրախությամբ ու զարմանքով ինձ համար արձանագրեցի այն փաստը, որ գտել եմ «աշխատությունը տեսքի բերողին» (իր խոսքերն են)։

Կամենում եմ նշել հայոց լեզուն նրբորեն ընկալելու, մեր լեզվի ոճական, շարահյուսական ու դարձվածաբանական բնույթի առանձնահատկությունները զարմանալի ճշգրտությամբ ու խորությամբ ըմբռնելու և դրա հետևանքով մեծ հմտությամբ մեկնաբանել կարողանալու նրա հիացմունք առաջացնող կարողությունը։ Մեր լեզվաբաններից մեկի հանրահայտ ասույթը, որ «լեզուն մինչև սովորելը, նախ պետք է զգալ», լիուլի կարելի է գործածել Նորին Ս. Օծության նկատմամբ։ Երանի ամեն հեղինակ ունենա այնպիսի բանիբաց խմբագիր, ինչպիսին ես եմ ունեցել...

Հայաստանի հանրապետություն, 1994, № 165, օգոստոսի 27

Էջմիածին, 1994, №№ 9-10, սեպտեմբեր-հոկտեմբեր,
(«Համառոտ ժամանակագրություն հանգուցյալ
Վազգեն Ա. կաթողիկոսի»)

Բեմ եկեղեցվո, 1994, № 18, սեպտեմբերի 1
(«Համառոտ ժամանակագրություն հանգուցյալ
Վազգեն Ա. Կաթողիկոսի ամենայն Հայոց»)